ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Կենտրոն, Սահմանադրության հրապարակ 1
Հեռ. (0223)2-23-45 հեռ./ֆաքս (060)460145
30 հունիս 2021 թ. N 1085

Ա/Հ ՀՄԱՅԱԿ ԳԵՂԵՑԻԿԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ
Ք. ԵՐԵՎԱՆ ՌՈՍՏՈՎՅԱՆ ՓՈՂՈՑ 21/22

Հարգելի պարոն Վարդանյան

Հայտնում ենք Ձեզ, որ Հրազդանի համայնքապետարանի և Ա/Հ Հմայակ Վարդանյանի միջև Խտացրած կաթի ձեռքբերման համար 30 մարտի 2021թ. կնքված թիվ «ԿՄՀՔ-ԳՀԱՊՁԲ-21/09» ծածկագրով պայմանագրի շրջանակներում Ա/Հ Հմայակ Վարդանյանը չի կատարել ստանձնած պարտավորությունը, մասնավորապես բազմիցս խախտել է պայմանագրի 2.4.1և 2.4.2 կետերը: Համաձայն պայմանագրի 2.1.7 կետի՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողը էականորեն խախտել է պայմանագիրը: «Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ ա/մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ/ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 2 օրից ավելի:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017թ.-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 17-րդ ենթակետը և պայմանագրի 2.1.7 կետը՝ Հրազդանի համայնքապետարանը միակողմանի լուծում է «ԿՄՀՔ-ԳՀԱՊՁԲ-21/09» ծածկագրով պայմանագիրը:

/ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Կատարող՝ Ռ. Դանիելյան
Հեռ. (060) 460161